

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



«Հրազդանի Խ. Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Թեմա՝** Բայի ուսուցումը 11-րդ դասարանում

**Կատարող՝** Ավետիսյան Անահիտ Մաքսիմի

**Առարկա՝** հայոց լեզու

**Ուսումնական հաստատություն՝** Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց

**ՀՐԱԶԴԱՆ 2023**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակության զարգացման բոլոր ժամանակներում առաջնահերթ է եղել նոր իմացությունների բացահայտման, դրանք խորությամբ և համակողմանիորեն հասկանալու, գործնականում կիրառելու անհրաժեշտությունը, այսինքն՝ գիտելիք ձեռք բերելու, գիտական հայտնագործություններ կատարելու, դրանք սերունդներին փոխանցելու հարատև ընթացքը կարևոր նշանակություն է ունեցել, որովհետև այն ամբողջացրել է հասարակության մեծագույն արժեքի՝ մարդու կրթության և դաստիարակության բովանդակությունը:

Հանրակրթական պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 4-ի որոշմամբ սահմանվել են Հայաստանում կրթական քաղաքականություն իրականացնող գերադաս մարմինների, կրթական տարբեր հաստատությունների անելիքները, գործողությունների ծրագրերը: Բազմաթիվ նորություններ կան Չափորոշչի դրույթներում, որոնք նախանշում են կրթական տարբեր աստիճանների վերջնարդյունքներին հասնելու պարտադիր պահանջը: Ահա «Ընդհանուր դրույթներ» վերնագրի առաջին կետը. «Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ) բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը»: Իսկ կարողունակությունները Չափորոշիչը ձևակերպել է այսպես. «Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերած գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ և պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական

առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից» (Չափորոշիչի 2-րդ բաժնի 6-րդ կետ):

Ուսումնական առարկայացանկի առաջին տողում մայրենի լեզուն է՝ հայերենը, և միանգամայն իրավացիորեն միջնակարգ կրթության ութ կարողունակությունների ցանկում առաջինը լեզվական կարողունակությունն է՝ լեզվական գրագիտությունը: Պահանջներն էլ աներկբա են՝ տիրապետել հայոց լեզվին, գրավոր և բանավոր գրագետ հաղորդակցվել մայրենի լեզվով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Սովորողները պետք է կիրառեն լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Հայոց լեզուն դպրոցական մյուս առարկաների ուսուցման լեզուն է նաև և սովորողի ամբողջական առաջադիմությանը նպաստող կարևորագույն գործոն:

Արդյունավետ ուսուցում իրականացնելու նպատակով նորացված Չափորոշիչը ուսուցչի աշխատանքի հիմնական ուղեցույցն է, և պետք է ուսուցման ընդունված մեթոդների հետ խելացիորեն համատեղել նոր մեթոդներ ու հնարքներ: Արդեն երկար ժամանակ դասավանդման արդի ձևը համագործակցային ուսուցումն է, որի ընթացքում հմուտ և գիտակ, առարկայական հարուստ գիտելիքներ ունեցող ուսուցիչը զանազան հնարներով, մեթոդներով առավել հետաքրքիր է դարձնում դասը՝ սովորողներին մղելով ինքնուրույն ու ստեղծագործական աշխատանքի, զարգացնելով նրանց քննադատական-վերլուծական մտածողությունը, համագործակցային ունակությունները: Նախկին ուսուցչակենտրոն գործընթացին աստիճանաբար փոխարինում է աշակերտակենտրոն համագործակցությունը, և աշակերտը սովորում է սովորել, գիտելիքների, հմտությունների, արժեքների նկատմամբ դրսևորում բարձր պատասխանատվություն և դիրքորոշում: Բնավ հակված չեմ նսեմացնելու ուսուցչի դերը գիտելիքների, տեղեկատվության փոխանցման գործում, բայց կարևորում եմ ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ հաղորդակցման հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը:

Առարկայի դասավանդման մեթոդիկան զարգացման անընդհատ գործընթաց է՝ կատարելագործման նորարարություններով: Յուրաքանչյուր դաս ստեղծագործական ընթացք է, որտեղ ամենատարբեր իրավիճակներ կարող են ստեղծվել: Ուսուցիչը

նախապես պիտի պլանավորի իր դասի կառուցվածքը՝ կարևորելով դասանպատակները՝ ուսուցողական (գիտելիք, կարողունակություն, հմտություն), դաստիարակչական (որոշակի հույզերի, զգացմունքների, արժեքային համակարգի ձևավորում) և զարգացնող (քննադատական մտածողություն, մտավոր զարգացում): Դասանպատակի ձևակերպումը պետք է ներառի հետևյալ բնութագրիչները՝

- ա) ի՞նչ պետք է սովորի, իմանա աշակերտը,
- բ) ի՞նչ պետք է հասկանա, կարողանա անել, կիրառել,
- գ) ինչու՞ պետք է սովորի այդ նյութը,
- դ) ի՞նչ արժեքներ պետք է ձևավորվեն:

Հստակ, որոշակի, կոնկրետ նպատակադրումից կբխեն դասի խնդիրները (պրոբլեմային ուսուցում), կնախատեսվեն ուսուցման մեթոդները, ձևերն ու միջոցները: Դասավանդումը մեծ վարպետություն է պահանջում ուսուցչից: Արդյունավետ, խրախուսող և հետաքրքիր ուսուցումը կպակասեցնի դժվարությունները, հաջողությունները կդառնան ակնառու, և անպայման կստեղծվի ուսումնառությանը նպաստող միջավայր: Ուսուցիչը բարյացակամ պետք է լինի, օգնող, աջակցող, ուշադիր (որքան էլ դժվար իրադրություններ լինեն), հարգալից, հնարավորինս առաջնորդվի «հավասարը հավասարի հետ» սկզբունքով: Նա պետք է համակողմանիորեն իմանա յուրաքանչյուր աշակերտի անձնային-անհատական, սոցիալ-հոգեբանական հատկանիշները և իր դիրքորոշումով հակադրություններ չստեղծի: Այդ դեպքում աշակերտ-ուսուցիչ փոխներգործությամբ կստեղծվի ակտիվ հաղորդակցություն, որը կնպաստի նպատակների իրագործմանը: Անշուշտ, չափազանց դժվար է ուսուցչի գործը, մանավանդ այժմ, երբ ուսուցչի կերպարի նկատմամբ («Ուսուցչություն՛ն, բարձունք ես անհաս») ակնհայտորեն պակասել են ավանդական հարգանքն ու հեղինակությունը, և շատ հաճախ ձախողումների համար հիմնական նշանակետ է դառնում հենց ուսուցիչը: Բայց երբ կյանքիդ ուղենիշը քեզ բերել է ա՛յս մասնագիտության ընտրությանը, և դու կրթության կարևորագույն անձն ես, ուրեմն առաջնորդվի՛ր Թումանյանի կարգախոսով՝ «Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս», մտի՛ր դասարան և շարունակի՛ր հոգուդ լույսը հունդավորել աշակերտներիդ մաքրամաքուր ներաշխարհում:

## ԲԱՅԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

### ա) ընդհանուր դրույթներ

Հանրակրթական առարկայական ծրագրերում բայը ուսուցանվում է 7-րդ դասարանում, ապա՝ 11-րդ դասարանում և 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում՝ դասընթացի կրկնության ժամանակ:

«Ճոխ ու հետաքրքրական է հայերենի բայը բառական-քերականական իր բազմազան դրսևորումներով և որպես այդպիսին՝ առատ ու խիստ արժեքավոր նյութ է գիտական հետազոտությունների համար», - այսպես է սկսում իր «Բայը ժամանակակից հայերենում» մենագրությունը խոշորագույն գիտնական Ա. Ա. Աբրահամյանը և ապա ավելացնում, որ «բայերի խոսքիմասային խումբը որոշելիս ամենից առաջ պետք է որոնենք այն ընդհանուր-բնորոշը, որը լեզվի մեջ առկա իրենց բառական մասնավոր իմաստներն ունեցող բազմազան բառերը միավորում է խոսքիմասային ընդհանուր արժեքով իբրև բայ: Բայի համար այդ ընդհանուրը գործողության կամ եղելության գաղափարի դրսևորումն է, որը և բայիմաստն է» (Ա. Ա. Աբրահամյան, «Բայը ժամանակակից հայերենում», 1962թ., հ. 1, էջ 5 և 15, ընդգծումը իմն է):

Եթե խոսքի մեջ գոյականը արտահայտում է նյութը, ապա բայիմաստը հանգում է շարժման գաղափարին, իսկ հոլովման և խոնարհման միջոցով արտահայտվում են տարածական և ժամանակային իմաստներ:

Հայերենի խոսքի մասերը տասն են, և սովորողները 7-րդ դասարանից ծանոթ են այդ համակարգի դասակարգմանը՝ ըստ խոսքիմասային ընդհանուր իմաստի:


## **բ) ուսուցման մեթոդիկա**

11-րդ դասարանում «Բայ» թեմային հատկացված 25 ժամերը արդյունավետ լինելու համար աշխատում են ապահովել այն վերջնարդյունքները, որոնք ամրագրում են թեմատիկ պլանավորման մեջ՝ տարբերակել բայը խոսքային տարբեր միավորներում, իմանալ բայի անդեմ և դիմավոր ձևերի քերականական հատկանիշները, համեմատել դրանք, կատարել եզրակացություններ, խոնարհել բայերը եղանակաժամանակային ձևերով (դրական և ժխտական խոնարհումներ), բանավոր և գրավոր խոսքի մեջ ճիշտ կիրառել դրանք, հատկապես հրամայական եղանակի բայաձևերը, ձևաբանական վերլուծությունների ժամանակ գտնել տրված սխալները, տարբերել անկանոն և պակասավոր բայերը, անկանոնությունները բայերի ձևափոխությունների ժամանակ և այլն: Հատկապես կարևոր է բայի թեմատիկ պլանավորման ժամանակ շարահյուսության հետ ներառարկայական կապերի ապահովումը ստեղծագործական տարբեր աշխատանքների միջոցով: Փոխադրություն, շարադրություն, գրական տեքստերի ստեղծում, շարահյուսական հոմանիշության կարևոր բաժնի՝ փոխակերպումների քերականական-իմաստային առանձնահատկությունների իմացություն, դերբայական դարձվածի շարահյուսական դերի անսխալ բնորոշում և այլն: Միմյանց հետ անխզելիորեն կապված են ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասությունների փոխակերպումները և բայի սեռը, ուղղակի և անուղղակի խոսքերի փոխակերպումը, որ փոխադրություններից շատերի նպատակն է լինում, պահանջում է սովորողներից եղանակաժամանակային ձևերի անսխալ իմացություն: Ի վերջո, ոճագիտության բաժինների ուսուցումը ևս սերտորեն խարսխվում է բայի գործառական առանձնահատկություններին վերաբերող գիտելիքների վրա:


11-րդ դասարանում բային հատկացրած 25 ժամերից առաջինը մուտքի դաս է՝ հիմնված 7-րդ դասարանում ստացած գիտելիքների բացահայտման նպատակադրման վրա: Հիմնական նպատակը հատկորոշիչ ուղղվածություն ունի, և բանավոր հարց ու պատասխանից հետո կիրառում են մտագրոհի (մտքերի տարափ) մեթոդը: Ի դեպ, ես այս մեթոդը հաճախ են օգտագործում, որովհետև գործնականում համոզվել են, որ այն ապահովում է սովորողների ակտիվ մասնակցությունը դասին, զարգացնում է

ինքնուրույն մտածողությունը, իսկ դասի ավարտին հետադարձ կապով անդրադարձը ամրապնդում է ունեցած նախնական և ստացած նոր գիտելիքները:

Գրատախտակին ստացվում է հայերենի խոսքի մասերի դասակարգման գծապատկերը (այն կա դասագրքում).



Մտագրոհի արդյունքում ստացվում է բայի խոսքիմասային հատկանիշների մասին սովորողների իմացածը, քանի որ լեզվական ցանկացած նյութի իմացությունը, խորացումը պայմանավորված է նախորդ օղակի յուրացման մակարդակով:



Աշակերտների մտքերը գրառվում են գրատախտակին, և այս ելակետից էլ սկսվում է կշռադատման փուլը, երբ մտքերից յուրաքանչյուրի հեղինակը (խումբը կամ խմբի անդամը) օրինակներով հիմնավորում է իր իմացածը: Անհրաժեշտության դեպքում ես ավելացնում կամ ընդհանրացնում եմ նրանց դիտարկումները: Օրինակ՝ կան բայեր, որոնք անորոշ դերբայ չունեն, շարահյուսական այլ պաշտոնների մեկնաբանման դեպքում բերում ենք բայի անդեմ ձևերով արտահայտված ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, խնդիր, պարագա ունեցող նախադասությունների օրինակներ (շեշտվում է դերբայի փոխանուն՝ գոյականաբար գործածությունը): Հիշում ենք նաև դրական և ժխտական խոնարհումների չ ժխտական նախամասնիկի մասին: Օրինակների մեջ լինում են նաև անենթակա և անդեմ (Մթնեց: Անծրևում է: Հեռանա՛լ, մոռանա՛լ, չհիշե՛լ, չխորհե՛լ...) միակազմ նախադասություններ:

Դասի վերջում տրվում է հատկորոշիչ թեստ՝ պարզ և միջին բարդության հարցերով (տրվածներից ընդգծել բայերը, նշել խոնարհումը, առանձնացնել անդեմ և



դիմավոր ձևերը և այլն): Տնային աշխատանք հանձնարարվում են դասագրքի վարժությունները, ստեղծագործական շարադրանք՝ գործածելով բայի անդեմ և դիմավոր ձևեր:

Հաջորդ դասերը վերաբերում են բայի անդեմ ձևերին՝ դերբայներին, որոնցից չորսը կոչվում են անկախ, չորսը՝ կախյալ (ձևաբայ): Կարևորվում է բուն դերբայական ձևերի (կախյալ դերբայներ) ընդհանուր իմաստը (ցույց են տալիս ընդհանուր վիճակներ՝ առանց նշելու կոնկրետ հանգամանքներ՝ դեմք, թիվ, ժամանակ), բերվում են օրինակներ: Համեմատության միջոցով հատկորոշվում են ձևաբայերը՝ որպես կախյալ դերբայ, որովհետև ինքնուրույն չեն կիրառվում, այլ եմ օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերի հետ դառնում են ստորոգյալ:

Թեմատիկ պլանը կազմելիս նշվում են դասանյութի ուսուցման նպատակները, վերջնարդյունքները, որոնք հետո յուրաքանչյուր դասի համար նախատեսվում են՝ որպես կարևոր բնութագրիչներ:

Ուսուցման ընթացքում նախապես առանձնացնում են այն թեմաները, որոնք կարող են հիմնական դպրոցում բավարար յուրացված չլինել (սա անժխտելի է): Օրինակ՝ անկանոն և պակասավոր բայերի ուսուցումը: Զարմանալի է, որ 7-րդ դասարանում «Բայ» թեմայի այս դժվարընկալելի նյութը թողնված է ուսուցչի հայեցողությանը (անցնե՛լ, թե՛ չանցնել), իսկ դասագրքում այն տրված է միայն հավելվածով (խոնարհման կանոնավոր հարացույցից շեղվող բայեր, դասագիրք, էջ 162-166): 11-րդ դասարանի գրքում էլ սա չկա: Փաստորեն 12-ամյա կրթակարգը, որը ավելացրել է ուսուցման տարիների թիվը, բնավ չի նպաստել հայագիտական գիտելիքների համակողմանի ուսումնառությանը: Չի նպաստում, որովհետև հայոց լեզվի շաբաթական 2 ժամը անբավարար է արդյունավետ ուսուցման համար: Դեռ լավ է, որ դպրոցի ղեկավարությունը ցուցաբերում է հոգածություն՝ լրացուցիչ ժամաքանակից հավելյալ 1 ժամ հատկացնելով: Գործնականում ուղղակի անհնար է համագործակցային հետաքրքիր դաս անցկացնել 45 րոպեում, և հաճախ ուսուցիչը անցնում է հաջորդ թեմայի ուսուցմանը՝ համոզված չլինելով նախորդի լիովին յուրացմանը, առանց բավարար վերջնարդյունքի (սա էլ անժխտելի է): Նշենք, որ գործածության մեջ գտնվող

շտեմարանների՝ բային վերաբերող բաժնի առաջադրանքների կատարումը պահանջում է հենց այդպիսի թեմաների խոր ու հաստատուն դպրոցական գիտելիքներ:

11-րդ դասարանում հատկապես ուշադրություն են դարձնում առկա շտեմարանների «Պնդումների փունջ» բաժնին, որովհետև այն ամփոփում է հայոց լեզվի բոլոր բաժիններում ընդգրկված ուսումնական-առարկայական նյութը: Դրանք դասի ընթացքում տարբեր ուսուցողական մեթոդներով ներկայացնելու հետաքրքիր նյութ են: Երբեմն այնպիսի առաջադրանքներ կան, որոնց պատասխանները աշակերտը միայն ինքնուրույն վերլուծական մտածողության արդյունքում պիտի գտնի:

«Պնդումների փունջ»-ը դասի ընթացքում ներդնելիս արդյունավետ է **m**-աձև աղյուսակի գործածությամբ, որը գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով **T**-աձև աղյուսակի մեկ այլ՝ ավելի ճկուն տարբերակը և միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հարմար միջոց: Այն նույնպես կարող է կիրառվել անհատական կամ խմբով աշխատելիս: Բայի ուսուցման որևէ բաժին անցնելուց հետո կամ տարեվերջյան կրկնության ժամանակ այս մեթոդի գործադրմամբ սովորողների իմացությունը դառնում է մնայուն գիտելիք, որովհետև յուրաքանչյուր «ճիշտ է», «սխալ է», «չգիտեմ» պատասխան հանգամանորեն մեկնաբանվում է:

Որքան էլ փորձառություն ունենա ուսուցիչը, հաջողության չի հասնի, եթե հակված չլինի նորը ընկալելու, քննադատաբար յուրացնելու, մանկավարժական վարպետությունը բարձրացնելու մտայնությանը («Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր», Ե. Չարենց): Հիշենք մեծերից մի քանիսի խոսքերը, որ կենսական ճշմարտություն են ամփոփում. «Վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է, լավը՝ սովորեցնում է այն» (Դիստերվեգ), «Սովորեցնել նշանակում է սովորել» (Ժուբեր), «Իմաստունը նա չէ, ով շատ գիտի, այլ նա, ում գիտելիքներն օգտակար են» (Էսքիլես) և այլն: **Իսկապես, սովորելը երբեք չի ավարտվում...**

11-րդ դասարանում բայը պիտի ուսումնասիրվի՝ իր քերականական բոլոր առանձնահատկությունները վեր հանելով: Ամեն թեմայի ուսուցումը սկսելուց առաջ ես առանձնացնում եմ այն հարցերը, որոնք հատուկ ուշադրության են արժանի: Բայի

կազմությունը և սեռը անցնելիս շեշտում են վ բայաձանց ունեցող բայերի դասակարգումը ըստ սեռի՝ կառուցվել, սիրվել, շրջապատվել, բարձրացվել՝ կրավորական սեռ, բնակվել, լվացվել, հագնվել, խելագարվել՝ չեզոք: Տույց են տալիս նաև, թե ինչպես տարբերակել ն, չ սուսկաձանցները արմատական նույն հնչյուններից՝ մտնել, իջնել, բռնել, մեկնել, փախչել, կանչել: Աշակերտներն օգնում են ինձ: Ընդամենը պետք է ներկայացնել փոփոխված բայաձևերը և թողնել, որ աշակերտը եզրակացություն անի (*մտած, մտել եմ, մտի՛ր, մտա և բռնած, բռնել եմ, բռնի՛ր, բռնեցի*): Եթե սուսկաձանց չէ, որևէ ձևում չի ընկնում, պահպանվում է: Նույնը կնկատվի *փախչել-կանչել* բառազույգի համեմատության դեպքում:

Պետք է դիտարկել նաև ոպ տառակապակցությունը բայերի կազմում. -ոպ ածականակերտ աձանց (մրոտել, կեղտոտել, փոշոտել, հոտոտել) և ոպ բազմապատկական բայաձանց (նստոտել, գրոտել): Այս և էլի շատ երևույթներ ուսումնասիրում ենք հիմքում համեմատություն-հակադրություն, ընդհանրություն-տարբերություն հասկացություններ ունեցող մեթոդների կիրառմամբ (աղյուսակների, դիագրամների, գծակարգերի կազմում և այլն):

Անկանոն և պակասավոր բայերը ուսուցանելիս առաջնահերթ է ճանաչողական՝ գիտենալու, գտնելու, տարբերակելու ունակությունը: Ոչ միայն անգիր իմանալ, այլև վերլուծել, քննարկել, համեմատել (նույն կազմությամբ կանոնավորների հետ) առանձնացնել անկանոնություն դրսևորող բայաձևերը, լավ պատկերացնել բայի կազմությունը, անորոշի և անցյալ կատարյալի հիմքերը: Ի դեպ, 7-րդ դասարանի գրքի հավելվածում կենալ բայը գրված է և՛ պակասավորների, և՛ անկանոնների մեջ: Ամենասկզբում պարզաբանում ենք՝ ինչու անկանոն, պակասավոր: Համագործակցային դասի ժամանակ խմբերին տրվում են վարժություններ՝ անկանոնությունը գտնելու դերբայական և խոնարհված ձևերի բայերով նախադասություններում: Այս դեպքում համեմատության աղյուսակը արդյունավետ ձև է: Օրինակ՝ *լալ, տալ, գալ* բայերը չունեն անկատար ձևաբայ, մի քանիսը ունեն տարարմատ ձևեր՝ *գալ-եկել, ուտել-կերավ, դառնալ-դարձավ, լինել-եղավ* և այլն:

Մյուսը ներկայացնում է հրամայականը՝ *գալ-արի՛, ե՛կ, ուտել-կե՛ր, տալ-տու՛ր, թողնել-թո՛ղ, զարկել-զա՛րկ, զարկի՛ր*: Հետո նշում են, որ *առնել, ելնել, տեսնել* բայերը

անկանոնություն են դրսևորում միայն հրամայականում՝ ա՛ն, ե՛լ, տե՛ս: Հիշեցնում են, որ հնչյունափոխված որոշ բառերում հենց տուր ձևն է՝ քրդատվություն, տվյալ:

Հաջորդ խմբին տրվում են զույգ նախադասություններ, որոնցում թող, արի, բեր ձևերը ունեն հրամայականի և վերաբերականի կիրառություն (հրամայականը կետադրելու են իրենք): Պահանջը՝ տարբերակել, մեկնաբանել՝ ինչու՞ են այս օրինակները տվել:

1. ա) Թող կիտվի խավարն ավելի խրթին,  
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,  
Եվ թող գա, թե կա ավելի չար բոթ,  
Մեխվի գոհ-երկրիս անարգված սրտին (Վ. Տերյան)

Ըղձական եղանակն անցնելիս այսպիսի օրինակներ եղել են (թող, երանի բառերի հետ մտովի գործածելիս ըղձականը հեշտ է յուրացվում):

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի... (Ե. Չարենց)

- բ) Տղա՛ս, թող մոլորություններիդ, զբաղվիր օգտակար գործով:  
Թող որսդ, արի, քաջասի՛րտ բազե,  
Քո երգը գուցե իմ որդին կուզե (Ռ. Պատկանյան)

2. ա) Արի, եղբա՛յր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն (Ն. Չարյան)  
Այս ի՛նչ հաջող օր է. արի հրացանս քաշեմ...

- բ) – Արի իմ հետևից, – շնչաց զինվորը և իջավ ձորը:

3. ա) «Բեր սրան մի լավ դաս տամ», – մտածեց հասակավոր մարդը:

- բ) – Բեր գրածդ շարադրանքը, միասին կարդանք, – պահանջեց ուսուցիչը:

Ամփոփելիս նկատում են, որ աշխատանքը ճիշտ է կատարվել:

Խոսքիմասային տարբեր գործածությամբ բառաձևերը առանձնացնելու մի այլ աշխատանք է տրվում հաջորդ խմբին, այս անգամ քերականական պահանջը զուգորդվում է ստեղծագործական աշխատանքի հետ՝ կազմել նախադասություններ (նաև տեքստ), որոնցում ասես, կարծես, չնայած, նայած բառաձևերը բայի և վերաբերականի, կապի կամ շաղկապի կիրառություն ունեն:

Խումբը մի փոքրիկ տեքստ էր կազմել՝ «Ճանապարհորդություն դեպի...» վերնագրով: Ահա այն...

*Իսկապես, ճանապարհորդությունը հրաշք է: Կա՞րողոք մեկը, որ չի սիրում ճանապարհորդել, տեսնել, ծանոթանալ և անհայտ ու անեզր հորիզոններից նորանոր տեղեկություններ ստանալ:*

*Երբ խոսք է բացվում ճամփորդության մասին, երազն ու կարոտը ասես ինձ առնում են իրենց թևերին ու թռցնում-տանում հեռու, բայց հարազատ մի աշխարհ...*

*Կարծես տեսնում եմ նրանց ապրած աշխարհը, լինում ամեն օր նրանց նայած վայրերում, նաև չնայած տեղերում: Ու երբ իմ երազ-արտոյտը իր նուրբ թևիկներով զարկում է պատուհանս, ես մտքում զրուցում եմ նրա հետ, չնայած պատասխան չեմ ստանում:*

*«Բարի՛ թոչուն, դու եղե՞լ ես պապերիս ոստանում, տեսե՞լ ես որբացած մեր տունը: Եթե ասես այնտեղ տանող ճանապարհը, չնայած դժվարություններին, ես էլ կճախրեմ այնտեղ: Չկարծես, թե չգիտեմ մեր կորցրած հայրենիքի մասին, հայ ժողովրդի պատմության ողբերգական ուղու, պայքարի ու մաքառումների մասին: Նայած հանգամանքներին՝ նրանք երբեմն կարողացել են սրով պաշտպանել իրենց հարազատներին, բայց արհավիրքը շատ մեծ է եղել:*

*Ա՛ն ինձ քո փոքրիկ ու թույլ թևերին ու հասցրու՛ Պոլիս. ուզում եմ ծաղիկներ դնել Դուրյանի ու Մեծարենցի գերեզմաններին...»:*

Աշակերտները հիմնականում ճիշտ էին հասկացել պահանջը, առանձնացրել էին բայերը և մյուս կիրառությունները.

ա) բայերը (նայած վայրեր, չնայած տեղեր՝ հարակատար դերբայներ, եթե ասես...՝ ըղձական ապառնի, 2-րդ դեմք, եզակի թիվ, չկարծես՝ ըղձական ապառնի, ժխտական խոնարհում):

բ) ասես ինձ առնում են՝ վերաբերական,

կարծես տեսնում եմ՝ վերաբերական,

չնայած պատասխան չեմ ստանում՝ շաղկապ,

նայած հանգամանքներին՝ կապ:

Տեքստը կարդալուց հետո նույն պահին տնային աշխատանքի մի հանձնարարություն ծագեց գլխումս (սա էլ է հնարավոր) և ձևավորվեց այսպես՝ տեքստի անկանոն և պակասավոր բայերը ձևաբանորեն վերլուծել (օրինակ՝ կա՞, բացվում է, առնում են, տանում են, չգիտեմ և այլն):

Հաջորդ դասին ներկայացվեց աշխատանքը. կարողացել էին գտնել բայաձևերը և վերլուծել, որոշ սխալներ բացահայտվեցին իրենց օգնությամբ:

Փորձը համոզել է, որ աշակերտների մտահորիզոնը ընդլայնելու, նրանց խոսքը հարստացնելու, պատկերավոր ու ներգործուն դարձնելու նպատակով անհրաժեշտ է գործնական որոշակի աշխատանք ծավալել ինչպես դասերի, այնպես էլ տնային հանձնարարությունների ընթացքում, այնպիսի առաջադրանքներ տալ, հարցադրումներ անել, որոնք կհետաքրքրեն նրանց, կմղեն որոնողական ինքնուրույն աշխատանքի, ընթերցանության, գեղեցիկ խոսքի նկատմամբ սիրո, հետաքրքրության խորացմանը (օրինակ՝ քերականական նյութին առնչվող գրական օրինակներ գտնել, ինքնուրույն տեքստեր կազմել, հագեցնել տրված տեքստերը քերականական եզրույթներով, դրանց հոմանիշներով և այլն): Ուսուցման՝ այսօր քննարկվող մեթոդական բազմազան հնարները (դրանց անունները, անկեղծ ասած, հաճախ չենք հիշում, բայց գործածել և կիրառել ենք) լայն հնարավորություններ են տալիս ուսուցման հետաքրքիր գործընթաց կազմակերպելու համար:

## **գ) կախյալ դերբայների (ծևաբայերի) և բայի խոնարհման ուսուցումը**

Բայը փոփոխվող խոսքի մաս է, որն արտահայտվում է առաջին հերթին խոնարհման միջոցով:

11-րդ դասարանում «կախյալ դերբայներ կամ ծևաբայեր» ենթաթեմայի ուսուցման ընթացքում շեշտում են դրանց միակ գործառույթը՝ միանալով օժանդակ բայի խոնարհված ձևերին՝ կազմում են բայի դիմավոր ձևեր և նախադասության մեջ դառնում են ստորոգյալ (հիշեցնում են 8-րդ դասարանում անցածը՝ պարզ ստորոգյալ, իսկ պարզ և բաղադրյալ ժամանակաձևերին կանդրադառնանք հետո):

Յուրաքանչյուր ծևաբայ ներկայացվում է անվանման բացատրությամբ, կազմության ձևով, օժանդակ բայի հետ ունեցած շարադասությամբ, համեմատվում նույնաձև վերջավորություն ունեցող այլ բառերի կամ ըստ գործածության նույնանուն ծևաբայեր լինելու քերականական իրողությունների հետ: Օրինակ՝ անկատար դերբայի ուսուցման ընթացքում գրում ենք երեք նախադասություն՝

ա) Աղջիկը հեռվից շարժում էր ձեռքը՝ կարծես ինչ-որ բան հասկացնելով:

բ) Շուտով ծավալվեց բնապահպանական մի շարժում, որ հետզհետե հզորացավ:

գ) Նկարչի ընկերական այդ շարժում վիրավորական ոչինչ չկար:

Համեմատության միջոցով սովորողները վերջին երկուսում նույնանուն բառերի խոսքիմասային արժեքը որոշում են (գոյականի ուղղական հոլով, ածանցավոր բառ և գոյականի ներգոյական հոլով՝ ում վերջավորությամբ): Առաջին նախադասության բայաձևը շարժել բայի անկատար ծևաբայն է:

Մի այլ դեպքում համեմատվում են ապակատար ծևաբայը անորոշի հոլովված ձևերի հետ.

ա) Ձիերը այնքան ծարավ էին, որ կարծես խմելու էին գետի ամբողջ ջուրը:

բ) Ձիավորները անտառի խորքում խմելու ջուր էին որոնում:

գ) Այս աղբյուրից ջուր խմելու էին գալիս շատերը:

դ) – Այս ջուրը խմելու՞ է, – հարցրեց անձանոթը:

Որքան էլ սկզբում չկողմնորոշվեն, միևնույնն է, աստիճանաբար գտնելու են պատասխանները. անցել են անորոշ դերբայի՝ գոյականաբար գործածվելիս հոլովվելու երևույթը (սեռական հոլովով որոշիչ՝ ինչպիսի՞ ջուր և տրական հոլովով նպատակի պարագա՝ խմելու էին գալիս, այնուհետև նույն անորոշ դերբայով ստորոգելի, շփոթել

հնարավոր չէ, որովհետև գիտեն՝ ապակատար ձևաբայը օժանդակ բայի հետ կատարվելիք գործողություն է ցույց տալիս, իսկ դա առաջին նախադասության մեջ է):

Համակատար դերբայի ուսուցման ժամանակ վազելիս-վազելուց ձևերը հանդիպադրվել են, այս դեպքում ընդամենը հիշեցնում են դա և պահանջում կազմել ճիշտ գործածության ինքնուրույն օրինակներ:

Վաղակատարի դեպքում անդրադարձը բայի կազմությանն է վերաբերում (ինչպե՞ս են կազմվում սոսկածանցավորների կամ պատճառականների վաղակատար ձևերը), նաև պարզ ու բազմապատկական ածանցով բայերի նույնանուն լինելուն (ուզում են գրել նամակը-անորոշ, նամակը գրել են - վաղակատար):

Ժխատական ձևաբայի իմաստային բացատրությունից հետո կազմվում է երկու ձև՝ կգրեմ և չեմ գրի, կկարդամ և չեմ կարդա: Հրամայական եղանակը անցնելիս կհամեմատվեն ա խոնարհման ժխտական ձևաբայը, ըղձական եղանակի եզակի երրորդ դեմքը և հրամայականը (Եթե կարդա գրածս... Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ...):

Բայի խոնարհման ուսուցումը հիմնվում է արդեն կախյալ դերբայների (ձևաբայերի) իրական վերջնարդյունքների վրա:

Նախ բնորոշվում է խոնարհումը (եղանակ, ժամանակ, դեմք, թիվ), ապա կազմության երկու եղանակները.

ա) վերջավորություններով, որոնք ավելանում են բայահիմքին (կարդաց-ի, երգեց-ի, թռ-ա, կարդա-մ, կկարդա-ս և այլն), որոնք կոչվում են պարզ ժամանակաձևեր,

բ) կախյալ դերբայներով (ձևաբայերով) և օժանդակ բայի խոնարհման ձևերով՝ ներկա և անցյալ (գրում են, գրելու են, գրել են, չեմ գրի): Դրանք կոչվում են բաղադրյալ ժամանակային ձևեր:

Ավելորդ չեմ համարում նորից հիշել 8-րդ դասարանում ստացած գիտելիքը բաղադրյալ ստորոգյալի մասին: Պահանջում են օրինակներ, կամ ինքս են առաջարկում (տարբեր ստորոգելիներով՝ չմոռանալով անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները):

Ընդհանրապես բայի եղանակները սովորեցնելիս կարևոր է հինգ եղանակների իմաստային տարբերակումը՝ ըստ խոսքի վերաբերմունքային արտահայտության (ստույգ՝ առանց որևէ վերաբերմունքի, հրաման, հորդոր, իղձ, հարկադրանք արտահայտող): Ժամանակը, դեմքը, թիվը բնորոշում ենք վարժությունների միջոցով,



անդրադառնում ենք հայերենի ուղղագրության հետ առնչություններին (կարդայի, գրեի), չ բայական նախամասնիկի կայուն ընկալմանը և տարբերակմանը բառական չ նախածանցից (չտեսնել և չտես):

Դիմավոր բայերի (խոնարհված բայերի) ուսուցման ընթացքում առանձնացնում ենք քերականական հետևյալ իրողությունների ամրակայումը (դա ներկայացնում են աղյուսակով, որի սյունակները լրացնում ենք թեմայի ուսուցման ընթացքում).

ա) ներկա ժամանակ ունի միայն սահմանականը՝ անկատար ներկա (դրա համար էլ անվանվում է նաև ներկա), իսկ սահմանականի ապակատար ներկա, վաղակատար ներկա անվանումներում ներկա բառը միայն օժանդակ բային է վերաբերում.

բ) հրամայական եղանակը ունի մեկ դեմք՝ 2-րդ, և մեկ ժամանակ՝ ապառնի,

գ) ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակները ունեն ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևեր,

դ) ժխտական խոնարհման առանձնահատկությունները (չ նախամասնիկ, մի՛ նախամասնիկ և չեմ օժանդակ բայ), այստեղից էլ՝ ենթադրականի ժխտականի բաղադրյալ ժամանակաձև դառնալը,

ե) եզրակացնում ենք, որ խոնարհված 14 եղանակաժամանակային ձևերից պարզ են 7-ը (սահմանականի անցյալ կատարյալը, հրամայականի, ըղձականի, հարկադրականի դրական, ժխտական ձևերը և ենթադրականի ժխտականը), իսկ բաղադրյալ ժամանակային ձևեր են դարձյալ 7-ը (սահմանականի առաջին վեցը և ենթադրականի ժխտականը),

զ) հարկադրականի պետք է եղանակիչը տարբերել առանձին ստորոգյալից (դարձյալ համեմատության միջոցով՝ պետք է գրեմ, հանդիպեմ – դեմք և թիվ ունի, իսկ պետք է գրել, հանդիպել – չունի, և պետք է բաղադրիչը բաղադրյալ ստորոգյալ է, ինչպես՝ ինձ պետք են գրիչ, տեպր, մատիտ):

Բայի եղանակային ժամանակաձևերի ոճական կիրառության հարցերը վերլուծվում են ոչ միայն բայի, այլև շարահյուսության ուսումնասիրության ժամանակ:

**ՃԻՇՏ ԵՎ ՍԽԱԼ**  
**(ԽՈՍՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ)**

Սովորողների՝ գրական հայերենով ճիշտ խոսքի կառուցման հմտություններ ձևավորելու համար (իսկ ուսուցչի նպատակը հենց դա է) պետք է ներկայացնել ամեն նյութի հետ առնչվող քերականական, բառակազմական, խնդրառական և այլ սխալները, պահանջել դրանց իսպառ վերացումը: Բայի դեպքում անհանգստացնող շատ խնդիրներ կան:

Ամենազայրացուցիչը եմ օժանդակ բայի սահմանական ներկա եզակի 3-րդ դեմքում է-ի փոխարեն ա օգտագործելն է, մի բան, որ համառորեն մտել է նաև նրանց խոսքի մեջ, ովքեր գիտեն, որ դա սխալ է, բայց գործածում են (գնում ա, պատմում ա, պետք ա): Աններելի է նաև բաղադրյալ ժամանակածևի ժխտական խոնարհման չի և բաղադրյալ ստորոգյալի չէ ձևերի խառնաշփոթը (չի գրում, չի երգի, բայց երգիչ չէ, երգող չէ, քնած չէ, օգտագործված չէ):

Նմանատիպ սխալներից է նաև չ սուկածանցավոր բայերի որոշ ձևերում չ -ն պահպանելը կամ խոսակցական ձևը գործածելը (օրինակ՝ փախչել բայը հաճախ հնչում է փախնում նույնիսկ գրական թարգմանությունների, բանավոր ելույթների, հեռուստագովազդների ժամանակ, դիպչել-ը վաղակատարում՝ դիպչել է, սառչել-ը՝ սառում է, սառչած և այլն):

Թեև քերականական նյութի ուսուցման, ինչպես նաև հայ գրականության դասերի ընթացքում ամենայն ուշադրությամբ վերլուծում ենք, ուղղում նկատված վրիպակները, այնուամենայնիվ դա ամեն դասի համար պարտադիր մաս է կազմում՝ «Ուղի՛ր սխալները, տեղադրի՛ր ճիշտ բառը» և նմանատիպ այլ պահանջներով հարցադրումները: Արդեն նշեցի մի քանի սխալների մասին (թռչել-թռնել, խոսում ա և այլն), բայց, ցավոք, այսօր դեռ արդյունքները գոհացուցիչ չեն, որովհետև հայոց լեզվի անաղարտության պահպանումը պետական վերահսկողության ներքո չէ, լեզվի մաքրության նկատմամբ համընդհանուր հոգածություն և միասնական պահանջ չկա: Սխալն այնպես է արմատացել, որ ուսուցչի սովորեցրածը հաճախ մնում է դասարանում՝ ընդամենը որպես նյութի ուսումնասիրության շրջանակում տրված հարցի պատասխան: Հատկապես աններելի են ինձ համար հեռուստատեսային տարբեր հաղորդումների ժամանակ

վարողների, մասնակից հյուրերի խոսքի անկաշկանդ (սա լավ հատկանիշ է, անկասկած, եթե գեղեցիկ է, մաքուր, անսխալ), անփույթ, բազմաթիվ սխալները: Մի՞թե հեռուստատեսային սերիալների հեղինակները, գովազդներ կազմողները, թարգմանչությամբ զբաղվողները, պետական-հասարակական գործիչները դեռևս չգիտեն, որ ոչ մեկ, երախտիքի խոսք, ընդամեն, որոշները, ի օգուտ, ի շնորհիվ, սառում է, դիպչել է, բարյացկամ, գնհատել, սննկանալ, փախչել է, հրավերք ստանալ և բազմաթիվ այլ ձևեր հայոց լեզվի կանոններին անհարիր են: Իմ աշակերտները գրառում են այդ սխալները, որ նկատում են իրենց շրջապատում, ներկայացնում ճիշտ ձևերը:

Ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում նկատվում են վ բայածանց չստացող բայերի վ-ով գործածության շատ դեպքեր (տուժվել, խաչակնքվել, քծնվել, նեղսրտվել, զանգվել, (և ոչ զանգահարել), վիճվել և այլն): Սխալ են գործածվում նաև ե խոնարհման բայերի եզակի հրամայականը (նույնիսկ գրավոր տեքստերում)՝ գրի՛, երգի՛, խոսա՛, ասի՛ր, մոտեցրա՛...

Բազմաթիվ սխալներ վերաբերում են վերաբերել-վերաբերվել, բռնագանձել-բռնագրավել, հառել-հառնել, վրդովել-վրդովվել, տեղիք տալ-տեղի տալ հարանունների սխալներին: Չի ուղղվում մեղանչել-ը գղջալ, ապաշխարել բայերի փոխարեն գործածելը, բռնագանձել-ը՝ բռնագրավել-ի, պահպանել-ը՝ պաշտպանել-ի և այլն:

Բայի կազմության ժամանակ ներկայացնում եմ աղյուսակ և պահանջում լրացնել ոչ միայն ճիշտը, այլև ավելացնել իրենց նկատածները.

<b><u>սխալ</u></b>	<b><u>ճիշտ</u></b>
խոսացնել	խոսել-խոսեցնել
խոսացած	խոսել-խոսած
խմացնել	խմել-խմեցնել
վազացնել	վազել-վազեցնել
վերջացրեցի	վերջացրի
բարձրացրեցի	բարձացրի
մզեցրած	մզանալ-մզացնել
խոնավեցնող	խոնավանալ-խոնավացնել
վախացնել	վախենալ-վախեցնել

Մի այլ դեպքում հանձնարարում են խոսքում կիրառել հարանունները (սփրթնել-սպրդել, պճնել-պչրել, ցնծալ-ցնցել և այլն), ուղղել խնդրառության, համաձայնության սխալները:

Մայրենիի ուսուցումը կատարվում է նաև այլ առարկաների դասաժամերին, այդ առարկաների դասագրքերով, բայց այստեղ ևս խնդիրներ կան: Տազնապահարույց է համացանցից օգտվողների գրագիտության մակարդակը, և վրդովեցնում է այն, որ նրանք դրա համար չեն անհանգստանում, չեն ամաչում:

Մի՞թե մեր լեզուն պետական պաշտպանություն չունի: Հայ լեզուն է մեզ պահել պետականություն չունենալու բազմադարյա հոլովոյթում: Ու դեռ պահելու է:

Հիշենք Ստեփան Զորյանի խոսքը.

*«Լեզուն իրոք մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստություն: Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց:*

*Լիակատար կյանքով ապրելու համար մայրենի լեզուն պետք է ոչ միայն սիրել աչքի լույսի պես, այլև իմանալ այն անսխալ, լավապես, խորապես»:*

Մի՞թե այսօր կանգնած չենք ամեն մի պատահական քամուց այս ու այն կողմ քշվելու վտանգի առաջ:

Բայը ուսումնասիրելու ավարտը 11-րդ դասարանում համընկնում է Մայրենիի օրվա և գրքի նվիրատվության հետ, և ես այդ օրվա խորհուրդն ընդհանրացնում եմ նաև թեմայի ամփոփման նպատակով անցկացվող համագործակցային դասի ընթացքում: Նախապես տրված երկու աշխատանքներից («Անաղարտ պահենք մայրենին», «Ինչու՞ կարդալ...» թեմաներով) ընթերցվում են հատվածներ, ներկայացվում 5-6 բայ՝ իրենց քերականական հիմնական հատկանիշներով, եղանակ, ժամանակ, դեմք, թիվ, սեռ, մեկնաբանվում են սովորողների մտորում-խոհերը:

Այա բաժանում են տեքստ և խմբերին տալիս հանձնարարություններ (ասեմ, որ դասարանը համապատասխան կահավորում է ունենում, օգտագործում են տեխնիկական միջոցներ, տրվում են տեսահարցեր, հնչում է գեղեցիկ ասմունք, մեր «արքայական խոսքի» ընտիր նմուշներ, տպավորություններ էքսկուրսիայից (Մատենադարան, Օշական), որի վերաբերյալ աշակերտները պատրաստել էին սահիկաշար):

Տեքստային աշխատանքի համար տրվեց ահա այս տեքստը.

*Հնչեցին գալարափողերը, և մունեփիկները փարփողեցին արքայի գալուստը:*

*Ժողովուրդը, խոնված բոլորակաձև հրապարակում, սպասում էր սրբազան երկյուղածությամբ: Ահա երևաց Տիգրան Մեծը՝ սնդուսափայլ ծիրանին ուսերին: Կորովի հայկազունը առաջ եկավ, բարձրացրեց աջն ու ասաց՝ կաթոգին հայացքն ուղղելով բազմությանը.*

*-Ա՛րք և փիկնա՛յք Հայոց աշխարհի, մահս մոտենում է. աշխարհը հանդերձյալ կանչում է ինձ: Լսե՛ք՝ ինչ եմ պատգամում իմ որդի Արտավազդին և Հայքին համայն: Ջավա՛կս, պայքարելիս մեր հողը հայրենյաց երկու զենքով պիտի պահես. մեկը սուրն է, մյուսը՝ լեզուն: Սուրը կդնես պատյան, կարող ես վերստին հանել, կոտորել, նորը կռել: Եթե մայրենին պատյանի մեջ առնես, այլևս երբեք չես հանի և ոչ էլ կստեղծես նորը: Չպիտի մոռանաս սա: Ամենայն կորուստ գտանելի է, կա հույս: Հայոց լեզուն կորցնելով՝ կկորցնես և՛ վարքը Հայոց մեծաց, և՛ Հայքը համայն, և՛ ապագան մեր ասպնջական ազատախոհ ազգի: Հզորացրու՛ երկիրդ՝ ի հեճուկս օտարների: Աներեր պահի՛ր գահդ, որ հայոց մայրաքաղաքը երբևէ չթափառի տերության այս ու այն կողմերում:*

*Որդի՛ս, քո ձեռամբ ամփոփի՛ր մարմինս Հայքին մոտ. ես սիրտս կվերածեմ բյուրավոր հյուսիների, կվերածնվեմ յուրաքանչյուր հայի մեջ, և հոգիս հովանի կլինի ձեզ հավիտյան:*

*Տապանաքարիս քարգործ վարպետների կողմից թող գրված լինի. «Նա այստեղ չէ. փնտրեցե՛ք նրան ամեն հայի մեջ»: Թող կարդան ու հասկանան, մեկնեն միտքս: Իսկ դուք, դպիրներ՛, քերթեցե՛ք իմ պատգամը մագաղաթներին, որոնք ավելի երկար կյանք ունեն, քան աստվածներն ու արքաները Հայոց աշխարհի:*

*Հուսամ, որ պատգամս կկատարվի Արտավազդ որդուս կողմից: Գիտեմ՝ դեռ գալու են հայոց փառքի փարիները, և դա կվկայեն տեսնողները:*

*Սովորողներից մեկը կարդաց այն: Այնուհետև ըստ խմբերի տրվեցին հանձնարարությունները:*

**1-ին խումբ** – ա) դուրս գրել ա և ե խոնարհման 4-ական բայ,

բ) տարբեր եղանակների 10 բայ (2-ական), վերլուծել ձևաբանորեն:

**2-րդ խումբ** – Դուրս գրել անկանոն և պակասավոր բայերը, վերլուծել ձևաբանորեն:

**3-րդ խումբ** – Դուրս գրել տարբեր սեռի պատկանող 2-ական բայ, վերլուծել



դ) բացատրել համանունները՝ անցավ-անցավ, գրեր-գրեր, սիրելիս-սիրելիս, կամ-կամ, հղի-հղի, մարի-մարի, գծեր-գծեր, ջրի-ջրի, կարդա-կարդա, երգի-երգի:

Կարծում եմ, և դա զգացվեց դասի ընթացքում, նաև տնային հանձնարարությունների կատարման արդյունքում, որ բայի յուրացումը բավարար էր: Դասի ընթացքում օգտագործվեցին կշռադատման փուլում երաշխավորվող մի քանի մեթոդներ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բայի ուսուցումը ամրապնդում են նաև 12-րդ դասարանի կրկնության ժամանակ: Դասագրքում տրված վարժությունների, շտեմարանի ձևաբանության թեստային առաջադրանքների կատարումը մի նպատակ ունի՝ սովորողներին նախապատրաստել քննության և մեծ կյանքի: Դասընթացի նկատմամբ նրանց հետաքրքրությունները բավարարելը իմ ամենօրյա մտահոգությունն է, և շեշտում եմ, որ իրենք ամփոփում են մայրենի՝ լեզվի գիտելիքները, որ կյանքում այդ գիտելիքների հարուստ պաշարը վստահ և համարձակ քայլելու հնարավորություն կտա: Հասկանալի է, որ այս դեպքում գործնական ուսուցում է կազմակերպվում, որովհետև քերականական ցանկացած նյութի ուսուցումը պետք է նպաստի սովորողների խոսքի զարգացմանը: Ոճագիտությունից առաջին կիսամյակի նյութերը վերաբերում են նաև բայի ոճական կիրառության բազմազանությանը գործառական ոճի տարբեր տեքստերում: Կրկնությունը ընդգրկում է թեմայի բոլոր նրբությունները, բայի քերականական կարգերի բացահայտման ընդհանրացումը, բառային, ոճական, քերականական ունակությունների, մաքուր, գրական հայերենով խոսք կառուցելու կարողությունների շարունակական զարգացմանը:

Ուսուցման նորագույն միջոցների խելամիտ կիրառումը նպաստում է ուսումնական գործընթացի կատարելագործմանը, և դա ակնհայտ է:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը
2. Հանրակրթական պետական չափորոշիչ (հավելված 2 ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 4-ի թիվ 136 որոշման)
3. Հանրակրթական դպրոցի առարկայական ծրագիր (հայոց լեզու)
4. Դասագրքեր (7-րդ դասարան, հեղինակներ՝ Հովհ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, 10-12-րդ դասարաններ՝ հեղինակներ՝ Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան)
5. «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը», Հ. Բարսեղյան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980թ.
6. «Հայոց լեզու. ձևաբանություն», Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Երևան, 2008թ.
7. «Բայը ժամանակակից հայերենում», Ա. Ա. Աբրահամյան, 1-ին հատոր, Երևան, 2009թ.
8. «Հայոց լեզու», ուսուցչի ձեռնարկ, 10-12-րդ դասարաններ, Ա. Սարգսյան, Երևան, 2009թ.
9. «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ», ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008թ.
10. «Մեթոդական ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցչի համար», Նաիրա Տողանյան, Թամարա Թովմասյան, Լիլիթ Գրիգորյան, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2012թ.,
11. «Ուսուցչի ուղեցույց տեսոր, օրվա դասի պլան», Վ. Գյուլագյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, Երևան, 2009թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն -----	2
Բայի ուսուցման մեթոդիկան 11-րդ դասարանում -----	5
ա) ընդհանուր դրույթներ -----	5
բ) ուսուցման մեթոդիկա -----	6
գ) կախյալ դերբայների (ձևաբայերի) և բայի խոնարհման ուսուցումը -----	15
Ճիշտ և սխալ (խոսքի կանոնական ձևավորում) -----	18
Եզրակացություն -----	24
Օգտագործված գրականություն -----	25